

Կ Ս Հ Մ Ս Ե Ա Խ Դ Ա Ր Դ Ք Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՈՅՈՒՀՏԱԲԱԿՄԻՐՑՈՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱԵՐԻԱ. ԵԵՐՐՈՐԴ

ԲՈՍՏԱՆՁՅԱՆ ԹԵԼՈՒՄ Ե

633
F-87

ԳՅՈՒՂՂՂՐԱԾ ՅԵՐԵՎԱՆ 1935 •

18276

04 AUG 2010

Կ Ա Հ Ա Ս Ն Ո Ւ Ն Դ Ա Ր Գ Ք Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

Հ Ա Մ Ա Մ Ի Ո Ւ Թ Ե Ն Ա Կ Ա Ն Ս Ո Յ Ո Ւ Զ Ա Բ Ա Կ Ա Ւ Ր Յ Ո Յ Ա
Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Գ Ր Ա Ս Ե Ն Ց Ա Կ

Ա Ե Ր Ի Ա Ը Վ Ր Ա Ր Դ Ի

633 սր.
F-87

Բ Ա Ս Ե Ն Հ Յ Ե Ն Ե
Ժ Ե Լ Ո Ւ Մ Ե

18276
37686

3976



6 .03. 2013

«Զբացել են կուլտակ սահմագործողի, արյուն ծծող վաշիստուի, սահմագործող վանառականի, ուրյադնիկների ու հոգեվոր հայրերի նին հայտնի Ֆիզուրաները:

Այժմ անվտնի մարդիկ են կոլտնտեսականների յեվ խորհենեսատկանների դպրոցի յեվ ակումբի գործիչները, ավագ տռակտորիստներն ու կոմքայնավարները, դաւական յեվ անասնապահական բրիգադիրները, կոլտնտեսուրյան դաւաների ամենալավ հարվածայինները»:

ԱՏԱԼԻՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Պրավդա»-յում և տեղական մամուլում արդեն հաղորդվեց այն մասին, վոր մարտի 4-ի անվան կոլտնտեսության անդամ Պարեզգին Բոստանջյանը (Արխազիայի Գագրիի շրջանի Ալաբամե գյուղ) ծխախոտ շարելու (թելելու) ասպարիզում հասել և ռեկորդային արտադրական նորմայի, այն ե՞ւ 75 մետրանոց ստանդարտ թելը շարում և մեկ որում:

Ինչոք և ականավոր այս փաստը՝ ինչու սրա մասին պետք և իմանան Խորհրդային Միության բոլոր ծխախոտագործները:

Ինչպես հայտնի յե, ծխախոտը շատ աշխատանք և պահանջող կուլտուրա յե, մասնավորապես մեծ աշխատանք և պահանջում ծխախոտի քաղելն ու շարելը: Մինչև այժմ ծխախոտ շարելու համար նորմա յե դրված որական 18 թել: Միայն միքանի ծխախոտագործներ տալիս են որական 25—30 թել:

Ինչպես յերեսում ե, ընկ. Բոստանջյանի արտադրանքը համարյա յեռակի գերազանցում և ծխախոտ շարելու պրոցեսում աշխատող ծխախոտագործների արտադրանքը:

Միմիայն Արխազիայում 1935 թ. պետք է տնկվի 12000 հեկտար ծխախոտ: Կուսակցության ու կառավարության վորոշման համաձայն, յուրաքանչյուր հեկտարից պետք և ստացվի վոչ պակաս քան 7 ցենաներ ծխախոտի հումույթ: Սա նշանակում ե, վոր յուրաքանչյուր հեկտարից պետք և շարել 1200 թել, իսկ 12000 հեկտարից՝ ընդամենը 14,400,000 ստանդարտ թել Շարելու համար գոյություն ունեցող արտադրանքի միջին նորմայի համաձայն (25 ստանդարտ թել), այս աշխատանքի համար պահանջվում է 576,000 աշխոր, իսկ յեթե յուրաքանչյուր ծխախոտագործ աշխատի այն արտադրողականությամբ, ինչպես աշխատում ե ընկ. Բոստանջյանը, այն ժամանակ կպահանջվի 192,000 աշխոր. հետևաբար, կարելի յե խնայել 384,000 աշխոր՝ ուրիշ աշխատանքների համար՝ կոլտնտեսության յեկամուտը բարձրացնելու ուղղությամբ: Յեթե յուրաքանչյուր ծխախոտագործ հասնի ընկ. Բոստանջյանը, ապա մասնակի կամաց 192,000 աշխոր:

տանջյանի ձեռք բերած արտադրանքի շին, այն ժամանակ ծխախոտ շարելու պրոցեսում միայն Արխագիտյում կտընտեսվի 286,000 աշխոր, վորը կոտուագործվի աշխանացանի, անասուններին ձմռան նախապատրաստելու, ճանապարհների և այլ աշխատանքների համար:

Վհրն և ընկ. Բոստանջյանի ձեռք բերած աշխատանքի բարձր արտադրողականության գաղտնիքը: Ինչեւ և նա հասկել դրան: Ներկա բրոշյուրի մեջ այդ բոլորի մասին խոսվում է: Յուրաքանչյուր կոլտնտեսական և աշխատավոր մենատնտես ծխախոտագործ, կարդալով այս բրոշյուրը, կասի՝ աշխատել այնպես, ինչպես ընկ. Բոստանջյանն և աշխատում: Տասնյակ Բոստանջյաններ Արխագիտյում գործով ցույց են տվել այս:

«Պորեղա» կոլտնտեսության անդամ ընկ. Սմետանը. դիտելով Բոստանջյանի աշխատանքը՝ ուղղակի հայտաբերել ե, վոր ընկ. Բոստանջյանի մեջ վոչ մի խորամանկություն չկա, այլ կա մի-այն խելացի և բարեխիղճ աշխատանք և յուրաքանչյուր բոպեյի մատածված տնտեսում:

Կոլտնտեսական Մեսրոբ Եքսուզյանը սովորաբար որական շարում եր 25—30 թել. ընկ. Բոստանջյանի աշխատանքի ձերին ձանօթանալուց հետո, նա սկսեց շարել որական 60 ստանդարտ թել՝ յուր աշխատանքի արտադրողականությունը բարձրացրեց 2 անգամ:

Միխայլովկա դյուզի «խորհրդային Արխագիտա» կոլտնտեսության անդամներն ընդուրինակելով Բոստանջյանի յեղանակը՝ համարյա ծխախոտ շարելու պրոցեսում արտադրանքը 2 անգամ բարձրացրել են. որինակ՝ Ալեքսանդր Ֆրանգոպուլոն 17 թելի փոխարեն շարում ե 23—25 թել, կեշանիդի Զոյան 15-ի փոխարեն շարում ե 30 թել, և այլն:

Խնդիրն այն ե, վոր Արխագիտյի և Խորհրդային միության ծխախոտագործական շրջանների ծխախոտագործները տիրապետեն ընկ. Բոստանջյանի մեթոդին: Կուսակցության մեծառաջնորդ ընկ. Ստալինը հարվածային կոլտնտեսականների համամետութենական առաջին համագումարում առաջ, վոր կոլտնտեսականի ունենոր կյանքի ուղին աղնիվ աշխատանքն ե, կոլտնտեսային բարիքների զգուշ պահպանումը, պրոլետարական պետության հանգեղ բոլոր պարտավորությունների ճիշտ կատարումը»

Հնկ. Բոստանջյանը յուր աշխատանքով ցույց ե տվել կոլտնտեսային աղնիվ աշխատանքի արտադրողականության որինակ:


Կարեոր և նշել, վոր առաջ, յերբ ընկ. Բոստանջյանը յեղել եր մենատնտես, յերբեք նա չի տվել այդպիսի արտադրանք:

Ինչու: Վորովինետե իր անհատական տնտեսության մեջ ստիպված և յեղել կատարելու, բոլոր տեսակի աշխատանքներ: Նա չի կարողացել ձեռք բերել վորմե գործնական մասնագիտություն: Յերբ ընկ. Բոստանջյանն ընդունվեց կոլտնտեսության մեջ, նրան նշանակեցին այն բրիգադում, վորը բացառապես զբաղվում եր միմիայն ծխախոտի մշակությամբ, և նա հնարավորություն ստացավ որ-որի վրա ձեռք բերել ծխախոտ շարելու պրոցեսները բարեկալվելու աելինիկան:

Եղ ինչ և սովորեցնում մեղ ընկ. Բոստանջյանի որինակը: Նա սովորեցնում ե այն, վոր մեղ մոտ կոլտնտեսություններում կան շատ հնարավորություններ՝ զյուտարարության և ուցիոնալիզացիայի ծավալման համար այնպես, ինչպես այդ անում են բանվորները Փարբիկաններում և գործարաններում: Բոստանջյանի որինակը ծխախոտագործական բոլոր աշխատանքների ստիպունակ կեղզը պետք ե գառնա հողի մշակման, սածիլման, քաղնանի, հակալորման և ծխախոտատերմաբուծության բնագավառներում: Ընկ. Բոստանջյանի ծխախոտագործության իդուովի Փորձը պետք ե հաղորդել Արխագիտյի և Խորհրդային Միության բոլոր ծխախոտագործներին: Այդ և համեստ, բայց պատվագոր այն խնդիրը, վոր գրել են իրենց առաջ այս բրոշյուրը կազմողները:

Մեր այս աշխատանքն սպառիչ չհամարելով մենք ինդրում ենք՝ բրոշյուրի մեջ ըստ եյության արծարծված հարցերի շուրջը բոլոր գիտողություններն ուղղել հետևյալ հասցեյով՝

Սուխում (Արխագիտա) Ֆրունզեյի փողոց, տուն № 33 «Խորհրդային Արխագիտա» թերթի խմբագրության:



ԴԱՐԵԴԻՆ ԲՈՍՏԱՆԶՑԱՆ

ԴԱՐԵԴԻՆ ԲՈՍՏԱՆԶՑԱՆ ԿԵՆՍԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

Դարեդին Հարությունի Բոստանջյանը ծնվել է 1907 թվականին՝ Տաճկաստանում։ Նրա հայրը յեղել է չքավոր գյուղացի։ 1910 թվականին ընկ Բոստանջյանի ընտանիքը Տաճկաստանից փոխադրվում և Արխագիտ և բնակություն հաստատում Մուխումի շրջանի Վերին Եղերի կոչված գյուղում։

Այստեղ մի փոքրիկ հողակտորի վրա նրանք զբաղվում են ծխախոտափորձությամբ, բայց վորովհետեւ ցարական իշխանության ժամանակ կյանքի պայմանները շատ ծանր եին, ուստի Բոստանջյանի ընտանիքն ստիպված թողնում և այդ փոքրիկ տնաեւությունը և տեղափոխվում Մայկոպի շրջանը։ Յերբ Արխագիտում հաստատվում և Խորհրդային իշխանությունը, Բոստանջյանի ընտանիքը նորից գերազանցում և Վերին Եղերի կոչված գյուղը։ 1931 թվականին Գարեգին Բոստանջյանը յուր կնոջ և յերեխաների հետ տեղափոխվում և Գագրիի շրջանի Ալախաձե կոչված գյուղը և բնակվում ե իր մեծ յեղբոր տանը, վորը նույնագես զբաղվում եր ծխախոտափորձությամբ։

Ալախաձե գյուղի առաջավոր մենատնտես աշխատավորները՝ ընկ. ընկ. Գ. Բոստանջյանը, Մաթեվոս Ուստյանը, Ս. Զակրյանը, Միսակ Ուստյանը և ուրիշները 1934 թ. մարտ ամսին հիմնեցին մարտի 4-ի անվան ծխախոտագործական կոլտնտեսություն։

Այդ օրվանից Գ. Բոստանջյանի կյանքն ընթացել է նոր ձևով։ Նրան—վորակյալ ծխախոտագործին—արդեն հարկավոր չեր զբաղվել տնային բաղմաթիվ մանր գործերով։ Ամբողջ նրա ուշադրությունը կլանված եր այն մտքով, թե ինչպես և ինչ մեթոդով կարելի յե առցիոնալացման յենթարկել ծխախոտի քաղը և թելումը (շարը), վորոնք ամենադժվարին պրոցեսներն են ծխախոտագործության մեջ։ Միախոտագործներ՝ ձերունի հոր և մեծ յեղբոր փորձին Գարեգինն ավելացնում ե նուև իր ստեղծագործական՝ կոլտնտեսականի, ենտուզիաստի ընդունա-

կությունները: Արդյունքն այն ե լինում, վոր առաջ ե գալիս մի նոր սիստեմ, վոր միայն Բոստանջյանին ե հնարավորություն տալիս հասնելու ոեկորդային մշակման, այն ե՝ մեկ աշխատանքային որում շարել—թելել 75 ստանդարտ թել, ոյլենքաները կարողացել են իրենց թելելու (շարելու) նորման բարձրացնել մինչև 50—60 թելի:

1934 թ. ամռան Փարեգին Բոստանջյանը մտնում է Վրաստանի կոմկուտակցության համակրողների խմբակը, վորը կազմակերպված եր մարտի 4-ի անվան կոլտնտեսությունում:

ՃԱԾԱԽՈՏԱԳՈՐԾԱՌՅԱՆ

ԸՆՎԱՆԻ ՄԱՐԴԻ

Ամբողջ յերկիրը ճանաչում ե Դօնբասի լավագույն հանքագործություն Նիկիտա Իզոտովին, յերկաթուղային տրանսպորտի լավագույն դիապետչեր Կուտաֆինին և կոլտնտեսությունների ու խորհուտնտեսությունների մի շարք անվանի մարդկանց: Սակայն մինչև հիմա Արխագիայում դեռ վոչ վոք չգիտե Փարեգին Բոստանջյանի մասին, Ալախաձեյի մարտի 4-ի անվան կոլտնտեսության անդամին, մինչդեռ նա ծխախոտի անկարանների անվանի մարդն ե և ծխախոտագործության բնագավառի Իզոտովը:

Արխագիայի կոլտնտեսությունում կան բազմաթիվ լավագույն հարվածայիններ: Ցեթե հարվածայինը մեկ աշխատանքի որում նորմայով նախատեսված 18 թելի փոխարեն թելում (շարում) և 25-ից 30 թել, ապա պետք ե ասել, վոր այս թվերը ներկայումս չեն համարվում վորպես ոեկորդային, վորովհետեւ կան արդեն հարվածայիններ, վորոնք մեկ որում թելում են 35—40 թել (շարան): Բայց ահա տեսեք, վոր «Խորհրդային Արխագիա» թերթի խմբագրությունն ստացել ե մի նյութ՝ ստորագրված մարտի 4-ի անվան կոլտնտեսության վարչության նախագահ ընկ. Զակրյանի կողմից, վորտեղ նա հայտնում ե, թե կոլտնտեսական Փարեգին Բոստանջյանը մեկ որում շարում և 75 թել: Այս թիվը չափանիկ է չլսված մի թիվ ե: Զեր կարելի հավատալ այդ խոսքերին, վոր մի մարդ մեկ որում կարող եր քաղել և շարժել 75 ստանդարտ թել: Վորոշեցինք գնալ աեղում սառուղել և հավատալ այդ խոսքերին:

Մենք Վրաստանի կոմկուտի Գագրիի շրջկոմի հրահանգիչ ընկ. Փիվագինի հետ մտտենում ենք ծխախոտի չորանոցին:

—Վրատեղ կարելի յե գտնել Փարեգին Բոստանջյանին, —հարցում ե ընկ Փիվագինն առաջին պատահած կոլտնտեսականին:

—Փարեգին Բոստանջյանին: Այդպիսին կա, բայց նա գտնը վում ե ծխախոտի դաշտում, հիմա կգա. նա լավ տղա յե, զոչախ-

(մոլուց) շարում և 75 ստանդարտ թել, աշխատում և ինչպես մեքենա, — ժաղալով պատասխանում և կոլանտեսականը:

— Ահա և նա:

Մեր առաջ ներկայացավ մի յերիտասարդ՝ միջին հասակով, գորշ գույնի հագուստով:

— Բարե՛, ընկ. Բոստանջյան. մենք յեկել ենք տեսնելու, թե դուք ինչպես եք շարում — թելում ծխախոտը:

Նա ամուր սեղմեց իմ ձեռքը և շփոթված պատասխանեց.

— Ես չեմ կարող հիմա թելել այնպես, ինչպես սովորության ժամանակ թելում եմ: Եերբ մարդիկ աշխատանքի ժամանակ նայում են ինձ, իմ ձեռքերը դոզում են, և յես հուզվում եմ:

— Վոչինչ, Գարեգին, մի շփոթվեք:

Նա նստում և ծխախոտի տերեների կույտերի մոտ և վերցնում և ասեղը: Յես ձեռքս եմ վերցնում ժամացույցը: Ժամացույցի մեխանիզմի հաճախակի հարվածները և Գարեգնի ձեռքերի ճկուն ու արագ շարժումները կարծեք թե իրար հետ մըրցում են և ձգում իրարից յետ չմնալ: Դա իրականում չտեսնը ված և միաժամանակ հրապուրիչ տեսարան եր:

Նրա աջ ձեռքն այնպիսի արագությամբ եր նստեցնում ծխախոտի տերեներն ասեղի սուր ծայրի վրա, վոր գժվար եր վորոշել նրա շարժումների բոլոր մանրամասնությունները:

— Բավական ե, — ասացի յես և վերջին անգամ նայեցի ժամացույցին: Ցոթանասուն սանտիմետր յերկարությամբ ծխախոտի թելը նա շարել եր յերկու րոպեյի ընթացքում: Աշխատանքի ինչպիսի արագություն և վարպետություն ունի նա: Ամեն որ չի կարելի թելել յոթանասուն և հինգ թել, — ասում և Բոստանջյանը, — շատ գժվար ե: Պետք ե ինքը քաղես ծխախոտը: Յեվ, բացի սրանից, մեր ծխախոտի դաշտը միահավասար չե, մի տեղ ծխախոտը լավ ե, մյուս տեղը՝ վատ — հեղեղն և փչացրել: Իսկ զախանգարում և արագ քազելուն: Ոգոստոսի 24-ին յես թելել եմ 75 թել այդ որը յես վորոշեցի ստուգել ինձ, թե յես վնրքան կարող եմ թելել: Ամբողջ որը ծխել եմ միայն 3 անգամ, ճաշել եմ չորանոցում: Սպորաբար, միջին հաշվով, որական յես թելում եմ 50—55 թել բայց յերբ ծխախոտը լավն ե, ատա մշտական կարող եմ թելել 70 թել:

— Ես մեծացել եմ Գարեգնի հետ միասին, — խառնվում ե մեր դրույցին Մաթելոս՝ Ուստայանը, — ինչպես նա, այնպես ել յես

մանկությունից աշխատում եմ ծխախոտի գծով: Բայց այդպես աշխատել յես չեմ կարող: Այս ըոպեյին յես սովորում եմ ժարեգնից և արդեն որական թելում եմ 35—40 թել:

Բոստանջյանից վոչ թե միայն Ուստայանն և սովորում, այլ նրանից սովորում են նաև ուրիշները: Մի քանի անգամ նրա մոտ սովորելու յեն յեկել Որջոնիկիձեյի անվան կոլտնտեսության կիթեթ կոմիտեյի քարտուղար ընկ. Եքսուզյան Մեսրոպը: Յեթե առաջներում Եքսուզյանը մեկ որում շարում եր 25—30 թել միայն, հիմա նա մեկ որում շարում ե 50—60 թել զուտ այն պատճառով, վոր նա լրիվ կարողացել և յուրացնել Բոստանջյանի փորձը:

Վերն և Բոստանջյանի արվեստի գաղտնիքը:

Նրա հատուկ պատվերով պատրաստվել ե թելելու ասեղ, վորի յերկարությունն և 70 սանտիմետր. այդ ասեղը հաստ չե մեր ստանդարտ ասեղներից, բայց մի քիչ լայն է: Այդպիսով, այս ասեղը ձեռքուժ բռնելու համար շատ հարմար է: Սուր ասեղները շատ հարթ են և հնարավորություն են աալիս ազատ կերպով անցկացնելու ծխախոտի տերեները, մինչդեռ ստանդարտ ասեղներով զժվարությամբ են անցնում, և վորպեսզի ասեղի առջեկ մասից տերեներն իջեցնենք ծայրի յետուի մասը, պահանջվում է գործադրել մեծ ջանք:

Յերկրորդ հանգամանքն այն է, վոր ընկ. Բոստանջյանը ծխախոտի քաղի ժամանակ տերեները դարսում ե իրար վրա այնպես, վոր տերեի կոթերն ընկնում են միմյանց վրա:

Կոլտնտեսականները հաստատում են, վոր ընկ. Բոստանջյանը թե ծխախոտի սածիլման և թե քաղիանի ժամանակ սիստեմատիկաբար գերակատարել ե աշխատանքի նորմաները՝ 2—3 անգամ:

Յեթե Դոնբասում մեծ չափով ծավալվել ե իգոռովցիների, իսկ յերկաթուղային տրանսպորտում՝ կուստաֆինցյանների շարժումը, ապա ծխախոտի զաշտերում կարող ե և պետք ե լայն ծավալ ստանա Բոստանջյանի շարժումը: Բոստանջյանի նշանակալի փորձն արժանի յե խոշոր և լուրջ ուշագրության: Կազմակերպություն ենք Բոստանջյանի փորձի լայն մասսայականացումը: Բող այդ անվանի մարդի փորձով սովորեն ծխախոտագործական տնկարանների հարյուրավոր և հազարավոր հարվածայինները:

Անցնենք հարյուր հազարավոր այնպիսի մարդիկ, ինչպիսին և Գարեգին Բոստանջյանը:

—Աշխատավորները քիչ են,—ասում ե իլիադին.—ահա գլխավոր պատճառը. Բայց մենք կսեղմենք, մի շաբաթ հետո գաշտում չենա վոչ մի տերեւ...

Յերկրորդ բրիգադի հողամասում, սարալանջում կանգնած ե մանկապարտեզի նոր շենքը. Այստեղից յերեսում և ամբողջ գյուղը Աբագորեն սկսում ե միթնել. Սարերը ծածկում են կապտավուն մշուչով: Հովտով, կոլանտեսականների խրճիթներից վոլորապը-տոյտ բարձրանում ե ծուխը—այստեղ ընթրիք են պատրաստում: Լուս և միայն ինչ վոր տեղ, մի կողմի վրա լսվում ե անընդհատ խշոց—կատարվում ե ծխախոտի քաղ:

Վորոշվեց այստեղ յերեկոյան անցկացնել կոլտնտեսականների թռուցիկ ժողով, բացատրելով նրանց Բոստանջյանի գալու նպատակը: Քիչ-քիչ դաշտերից սկսում են հավաքվել մարդեկ: Նրանք բարեւում են ու սկսում ինչ վոր բանի մասին աշխուժորեն միմյանց հետ խոսել: —Մենք գիտենք,—ասում են նրանք,—այդ անսպասելի այցելության մասին:

—Ցես կզնամ մի քիչ ծխախոտ կքաղեմ—ասում ե հանկարծ Բոստանջյանը: Նրա հետեւից են գնում կին կազմակերպիչ Ելենեպուլուն և մի քանիսը: Նրանք չեն համբերում դիտելու նրա աշխատանքը:

Սարալանջի ներքեւ կանաչին և տալիս չքաղված դաշտը: Բոստանջյանը դիտում է այն, սիրավել ընտրում ե տերեներն ու հանկարծ սկսում ե քաղել: Յերբ նա կառնում է, նրա ձեռքերի մեջ պակում են կոթունը-կոթունի վրա միշտ դարսված «Տրապիզոն» ծխախոտի փնջերը:

—Ո՞յ մայրիկ, զորքան լավ ե,—անկեղծորեն բացագանչում է Ելենոպուլոն,—իսկ յերբ մենք քաղում ենք, մեղ մոտ յերբեք այդպես հավասար չի ստացվում:

Սա Բոստանջյանի առաջին «գաղտնիքն» ե. տերեների ճիշտ քաղելը և դասավորումը հիմնական պայմանն ե շարելն արագնելու համար:

Ժողովը տևեց կարճ, բայց անցավ շատ աշխուժ: Գյուղխորհը նախագահ Իլիադին, գյուղատնտես Մուրթիդին և ուրիշները խօսում եին Բոստանջյանի և նրա աշխատանքների մեթոդների մասին: Նրան բաղդատում եին հանքահան իզոտովի հետ, կոչ Երին անում սովորելու նրանից—ծխախոտի քաղի և շարելու այդ ժանր և շատ ջանք պահանջող գործի—ռացիսնալ ձեռքը:

ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ԹԵՂՈՒՄ Ե.

Սուխումից 9 կիլոմետր հեռավորության վրա, լեռներով շրջապատված, կանաչների մեջ գտնվում ե հունական Միթայլովի գյուղը: Այստեղ գտնվում են ծխախոտագործական յերեք կոլտնտեսություն՝ «Խորհրդային Աբխազիա», «Կոկինոս ստրատուս» և «Ենոսիա»:

Եր առաջին ճանապարհորդությունն այստեղ կատարեց ծխախոտագործության իդոտովը—Գագրիի կոլտնտեսական, Աբխազիայի լավագույն թերող Գարեգին Բոստանջյանը: Նրա աեկորդի մասին—վոր նա մեկ որում շարում է 75 թել—գիտեն վոչ միայն Աբխազիայում, այլ նաև հետագոր յերկրներում, նրա սահմաններից դուրս: Բոստանջյանի մեթոդի գիտական հետազոտության համար նրա հետ յեկան Աբխազիակի ավագ գյուղատնտես ընկեր Մուրթիդին, ծխախոտագործական զոնալ կայտնի աշխատակից ընկ. Ալեքսեյիկը և «Խորհրդային Աբխազիա» թերթի ներկայացուցիչը:

Հենց վոր մենք իջանք ավտոմեքենայից, մեզ շրջապատեցին կոլտնտեսականները: Յեկավ գյուղխորհիդի նախագահ ընկ. Իլիադինը: Վաս, ուրախ ժպիտը յերեսին դեպի: Բոստանջյանը մոտենում է ալեհեր հույնը՝ ձեռքը մեկնելով նրան:

—Բարեմ: Այդ գուռ յես Բոստանջյանը, լսել ենք քո մասին, կարգացել ենք թերթերում,

Դարեգինը շփոթված պատասխանում ե նրան՝ ձեռքն ուժեղ սեղմելով:

Վորորապտույտ կածանով, վորը քիչ առաջ տեղացած անձը հետո դեմս չեր չորացել, անցնում ենք «Խորհրդային Աբխազիա» կոլտնտեսության դաշտերը: Ճանապարհին մենք նայում ենք ծխախոտի չորանոցներին, վորոնք լիքն են «Սամսոն» և «Տրապիզոն» ծխախոտերի վոսկեզոծ տերեններով: Ամենուրեք մենք հանդիպում ենք ծխախոտի դաշտերի, վորտեղ հասունացած ծխախոտը կանգնած ե ցողունների վրա: Կոլտնտեսությունը վորոշ չափով ուշացըրել ե բերքահավաքը:

իսկ դրան, գուգընթաց, ներկա յեղողների յետեի շարքերում, ուր չեր հասում նավթի ճրագի աղոտ լույսը, տեղի յեր ունենում կիսաձայն, բայց տաք վիճաբանություն: Կասկածամիտները կասկած են հայտնում ոյն մասին, վոր հնարավոր չե մեկ որում շարել 75 շարան:

— Ի՞նչ ե սա, մարդ, թե մեքենա: Մենք ել շարել գիտենք, իսկ մեզնից վոչ մեկն այսքան չի շարել:

Ուրիշներն աշխատում եյին նրանց հակածառել, պատճառաբանելով զլխավորապես նրանով, վոր այդ մասին լրագրում գրված ե, և վոր այդպես ե, ուրեմն ճիշտ ե: Լրագիրը չի խարի: իսկ ընդհանրապես վաղվան որը ցույց կտա:

Ինքը՝ վիճաբանության առարկան, խոսում եր քիչ: Հետեւոքական արվեստ նա վոչ մի տեղ չեր սովորեց:

— Այստեղ վոչ մի գաղտնիք չկա: Դլխավորը ծխախոտի քաղնե, — ասում ե նա, — ցույց տալով քաղված տերեների փունջը: Կոթյունները պետք ե լինեն հավասար: Բացի այդ, պետք ե հետաքրքրվել, պետք ե ուշադիր լինել մեր կոլտնտեսականներից ովքեր վոր հետաքրքրվում են, նրանք 20—30 շարանի փոխարեն արդեն շարում են 50—60 շարան:

Զգտելով թափանցելու այդ անսովոր վարպետության գաղտնիքի մեջ՝ նրան տալիս են հարցեր. որվա մեջ նա քանի ժամ և աշխատում, քանի անգամ և ուտում և ծխում, յեր և քաղում ծխախոտը: Աղահորեն վորսում են պատասխանները և նորից սկսում են տաք վիճաբանությունը՝ խախտելով ժողովի սահմանած կարգը:

— Վաղն ընկ. Բոստանջյանը կաշխատի յերկրորդ բրիգադում: Ով հետաքրքրվում ե, թող գա, — հայտարարում ե իլիադինը:

— Ի՞նչու համար յերկրորդ՝ շարքերից լսվում են դժգոհ ձայներ, — թող աշխատի չորրորդ բրիգադում:

— Ի՞նչմետ համար չորրորդում, թող գա առաջին . . . և վիճաբանությունն սկսում ե տաքանալ նոր թափով:

Պարզ ե՝ Արխագիտի լավագույն շարողի գալուստը կոլտընտեսականներին հուզում եր: Բոստանջյանն անկասկած այստեղ կզտնի իրեն կողմանիցներ և հետեղներ:

Հաջորդ որն առավոտվանից Բոստանջյանը գնաց ծխախոտ քաղելու: Նրա հետեից դաշտ յեկան նոր գործի ենտուգիտաստները՝

ցանկություն ունենալով սովորելու Բոստանջյանի մեթոդը: Դրանք եյին՝ յերկրորդ բրիգադի բրիգադավար Մաստոպուլոն, չորրորդ բրիգադի բրիգադի Շաղլախովը, կուտնտեսության ամենալավ շարողներ՝ Աղաֆիա Պոպանդոպուլոն և Պերսաֆոնա Կոնստանտինիցին, կին կազմակերպիչ Ելենոպուլոն, գյուղխորհրդի նախագահ Իլիադին Մի առ ժամանակից հետո յերեաց փորձված ծխախոտագործ ծեր: Կեշանիդին՝ առաջին բրիգադի բրիգադավարը: Գալիս եյին նորանոր մարդիկ:

Բոստանջյանն աշխատում եր առանց շտապելու, բայց ճարպի կորեն և խելացի: Քաղելով տերեների կույտը՝ նա ցույց եր տառիս, ինչպես պահել մատները, վորպեսզի տերեները պոկվեն ուղղի, ծխախոտն ինչպես դասավորել զամբյուղի մեջ: Սկսում են նրան ընդուրինակել:

— Եւս արդեն Բոստանջյանական եմ, — ուրախ հայտարարում է իլիադին՝ ցույց տալով տերեների հավասար փունջը, — յես արդեն տիրապետում եմ աելնիկային...

Նրա հետեից սկսում է Բոստանջյանի ձեռվ աշխատել ջահել Աղաֆիա Պոպանդոպուլոն և մյուսները: Իրեն հաջողություններում հպարտանում ե Ելենոպուլոն:

Զամբյուղները վիքն են: Բոլորն ուղևորվում են յերկրորդ բրիգադի մոտակա չորանոցը: Այստեղ վաղուց ե, ինչ յեռում ե շարելու աշխատանքը:

Բոստանջյանն զգուշությամբ գատարկում ե զամբյուղից իրեն քաղած տերեները, կանոնավոր շարում և հատակի վրա՝ կոթյունները վերեւ: Հանելով իր 70 սանտիմետրանոց ասեղը, վորը շինված ե նրա հատուկ պատկերով, նա, վորպես վործ, շարում ե մի քանի գաստով տերեւ: Բոլորն աչքերը հանել են նրա ճարպիկ ձեռքերին: Յեվ հանկարծ սկսում ե զարմանք, և հրճվանք ե յերեւում բոլորի յերեսին: Լսվում են կարճ բացականչություններ հունարեն լեզվով.

— Այս, այդ մարդը կարողանում է աշխատել:

Ընկ. Ալեքսեյեվը, խրոնոմետրաժիստի գերեն իր վրա վերցնելով՝ ժամացույցով, բլոկնուով և մատիտով տեղափորվում ե վոչ հեռու գերանի վրա:

Բոստանջյան՝ լիֆամաքմանի մասին Ա. թևի կումայրիկի լինելու մասին աշխատական և յերկար և տափակ ասեղը, Բոստանջյանը վախճառքական և Ա. Մաշտակ և Ա. Մաշտակ:

վորը նման և վարժական սուսերի: Զախ ձեռքով բռնելով հայվասար դարսած «Տրապիզոն»: ի տերեւների փունջը՝ դնում ե իր ծնկի վրա, ապա վերցնում ե փնջից մի քանի տերեւներ և արագ, վարժարժումով անց ե կացնում դրանց ասեղի ծայրով: Նրա ձեռքերում հանդես են գալիս տերեւների նոր փնջեր, վորոնք նույնպես կայծակի արագությամբ անհայտանում են:

Ասեղը լցված է: Մի քանի վարժ, չափված շարժումներով նա տերեւները շարժում ե թելի վրա, և նորից սկսում ե թելել: Կոլտնտեսականներն անդադար հետևում են նրա ձեռքերին: Բոստանջյանի աշխատանքի մեջ ինչն և զարմանալի—դա բոլոր շարժումների չափված ուշադրությունն ե, իրեն ուժերի մեծագույն տնտեսումը, վորը հասցված ե ժամանակի խտացման սահմանին: Վոչ մի ավելորդ շարժում, վոչ մի չոդտագործած վայրկյան:

Դա արդեն հասարակ աշխատանք չե: Դա վարպետություն ե, կատարելության հասցված, դա արվեստ ե, վորը հիմնված ե բոլոր շարժումների հաշվարկումների և արտադրական բոլոր պրոցեսների խորը և մտածված ուսումնասիրության վրա:

Միաժամանակ մենք դիտում ենք մյուս թելողներին՝ ձգտեալով վորոնել աշխատանքի մեթոդի տարբերությունը: Առաջին հայացքից թվում ե, վոր տարբերություն չկա: Նույն պրոցեսները, նույն մարդիկ, բայց ձեռքերի շարժումների քիչ վարժվածություն Տարբերությունը մենք վորոնում ենք մանրումունքաներում:

Մյուս թելողների մոտ շարելու համար պատրաստած ծխաւխոտը դասավորված է հենց այնպես: Ծխախոտը սովորաբար հասարակ ձեռվագում են զամբյուղից: Տերեւները պառկած են անձև կույտերով, և թելելու ժամանակ հաճախ սկսում են պրատել և վերցնել տերեւները մեկ-մեկ:

Բոստանջյանի մոտ ծխախոտը պառկած է հավասար փնջերով՝ տերեւը տերեւի վրա, ինչպես նա դարսվում ե քաղի ժամանակ:

Մի քանի թելող, ծակելով տերեւը միանգամից, խորը շարժում են այն ասեղի կենտրոնը:

Բոստանջյանը մի անգամից ծակում է մի քանի տերեւներ, ապա մեկ հարվածով շարժում ե առաջ: Նախքան թելելու աշխա-

տանքն սկսելը, Բոստանջյանն ընտրում ե իրեն հարմար զիրք, ացիկոնալ ձեռվ իր կողքն և դասավորում այն բոլորը, ինչ իրեն անհրաժեշտ ե:

Այդ «մանր-մունը» բաների հետ միասին, Բոստանջյանը տնտեսում ե շատ ժամանակ: Ահա հիմնականում նրա գաղտնիքները, վորպիսիք նա սիրավիր կերպով հանդես բերեց և լորիը դային Արխագիա» կոլտնտեսությունում:

Բոստանջյանի վոտների մոտ գեղեցիկ վորբապտույտ ձեռվ ընկած ե շարած չորս թելը: Ընկ. Ալեքսեյիկը իր բոլինուում նշանակում ե վերջին չորս ըորս ըոպեները և վայրկյանները: Փորձն ավարտված ե:

—Չորս թել շարելու համար Բոստանջյանն ոգտագործել ե 44 ըոպեն, —հայտարարում ե նա: Այդ նշանակում ե, վոր հինգ մետր թել շարելու համար պահանջվում ե 11 ըոպեն: Այսպիսով, 75 շարան թելելու համար Բոստանջյանին հարկավոր ե 13 ժամ 45 ըոպեն:

Հաշվի պետք ե առնել նաև այն, վոր Բոստանջյանը գործ է ունեցել «Տրապիզոն»-ի հետ, վորի թելելն ավելի դժվար ե, քան «Սամոն» տիսակինը:

Ցեղ այդպիս, 75 թել—սա վոչ հեքիաթ ե և վոչ ել մտացածին բան: Միանգամայն ուեալ գործ ե ծխախոտի թելման աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացման հնարավորությունը:

Այժմ կասկածողներ համարյա թե չմացին: Ընդհանուր միտք արտահայտեց յերկրորդ բրիգադի բրիգադավար Խարլամպի Մուստապուլոն: Նա ասաց:

—Մենք նույնպես հին ծխախոտագործներ ենք: Մենք կարգացել ենք Բոստանջյանի մասին և ինքներս փորձել ենք աշխատել նրա նման: Նստել ենք մինչև անքամ գիշերները, բայց 30 թելից ավելի չենք կարողացել շարել Մենք չենք իմանում ինչպես այդ գործը ուցիոնալացման յենթարկել: Այժմ մենք տեսանք, թե ինչպես ե աշխատում Բոստանջյանը: Վորոնք են նրա «գաղտնիքները»: Մենք հանձն ենք առնում ընդունիները և խորացնել նրա փորձը:

Բոստանջյանն ունի այնպիսի բաներ, վորոնք պետք ե սովորել—զբանում համոզվեցին «Խորհրդային Արխագիա» կոլտնտեսության ամենամոլեսանդ կասկածողները:

Մեկը մյուսի յետեից դուրս են գալիս կոլտնտեսության ամենալավ հարվածայինները: Նրանք խոսում են իրանց տեղերից՝ մի բռակ վայր զնելով իրենց ասեղը: Պերսանոնա Կոնստանտինիդի, Աղաֆիա Պոպանդոպոլո, Ալեքսանդր Ֆրանգոպոլո—դրանք բռլորն իրենց վրա պարտականություն են վերցնում յուրացնելու Բոստանջանի աշխատանքի մեթոդը և սովորեցնել ուրիշներին ել աշխատելու Բոստանջյանի նման:

Սակայն այդ քիչ եւ: Միխայլովիայի կոլտնտեսականներն անձամբ ծանոթանալով Բոստանջյանի աշխատանքին, վորոշել են՝ առաջադրության կարգով զիմել Արխագիայի բոլոր կոլտնտեսություններին՝ սովորելու նրա մեթոդը: Այդ առաջարկն ընդունվում է միաձայն:

Բոստանջյանական շարժումը ծավալվում է: «Խորհրդային Արխագիա» կոլտնտեսությունը նրա առաջին հրձիգը յեղավ:

Ցերը մենք դուրս յեկանք. յես լսեցի, թե ինչպես թելողներից մեկն իրեն ընկերոջն ասում եւ:

— Դու աշխատում ես ճիշտ այնպես, ինչպես Բոստանջյանը: Շուտով այդ խոսքերը կարելի յե լսել Արխագիայի ամեն մի կոլտնտեսությունում:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՃԽԱՏՈՒՄ ԴԱՐԵԳԻՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ

Ծխախոտագործության մեջ ծխախոտի քաղը և թելելը հանդիսանում են ամենաշատ աշխատանք պահանջող պրոցեսները, զբաղեցնելով ծխախոտի մշակման ամբողջ ժամանակի 30—40 տոկոսը, պահանջելով խոշոր քանակի բանվորական ձեռքեր՝ ծխախոտի բերքահավաքի այդ ծանր ժամանակ: Այստեղից հասկանալի յե այն խոշոր նշանակությունը, վորոն ունի այս կամ այն աշխատանքի ռացիոնալացումը, վորը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը:

Ցերե ի նկատի ունենանք այն, վոր ծխախոտի քաղը և թելումը հանդիսանում են խիստ սեղոնային աշխատանքներ և վոր ժամկետի ամենաշնչին խանգարումը կամ անժամանակ հավաքը հասունացած ծխախոտներին հասցնում է վորակի և քանակի մեծ կորուստ—այս դեպքում այդ աշխատանքների ռացիոնալացման

նշանակությունը, վորը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, հսկայական չափով մեծ կլինի:

1934 թ. Փագրիի շրջանի, Ալեխանդրյի գյուղիսորհոգի մարտի 4-ի անվան կոլտնտեսությունը, հարվածային կոլտնտեսական ընկ. Բոստանջյան Գալբեգին Հարությունի աշխատանքի շնորհիվ, ծխախոտի քաղի և թելումի սացիոնալացման միջոցով հասավ և կորցրացյին՝ 75 ստանդարտ շաբանի թելումի (ծմետրանոց), մեկ որում:

Ծխախոտագործության պատմությունը չգիտե մեկին, վորը մեկ որում թելի 75 շաբան: Դա յերկու անգամ գերազանցում է թելողների արտադրանքը: Մինչև այժմ ամենալավ թելողները տալիս են 30—40 շաբան՝ մեկ որում Այդ պատճառով հասկանալի յե այն հսկայական հետաքրքրությունը, վորն առաջացած ծխախոտագործական լայն մասաների ու այն շահագրգռված որդանների մեջ, վորոնք հբապարակել ենին ընկ. Բոստանջյանի ուկորցրացյին թվերը:

ԸՆԿ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔԸ»

Շատերը դեռևս չեն հավատում Բոստանջյանի նվաճումներին, վոմանք ել կարծում են, վոր նա ունի ինչ վոր գաղտնիքներ: Իրականում ընկ. Բոստանջյանը վոչ մի գաղտնիք չունի: Ամբողջ գործը կայանում է ծխախոտի ճիշտ, ռացիոնալ առանձին քաղերը փնջերով (10—16 տերեններից) ձեռքով կատարելու մեջ քաղի ժամանակ ճիռքի մեջ տերենների ճիշտ դասավորելու և առանձնապես քաղված տերենները կոթունները ճիշտ և հավասար լինելու մեջ:

Այսուհետև քաղված տերենները վճերով միջարդային տարածությունների մեջ դարսելը, այդ կույսերը, հավաքելը, այդպիսինները զամբյուղի մեջ դարսելը, զամբյուղներից չորանոցում դատարկելը և մինչև թելումի մ մենար պահանջվում է տերենների դասավորման այն կարգը, վոր դրված է քաղի միջոցին:

Ընկ. Բոստանջյանի ձեռվ քաղած տերենները, պահպանելով նույն կարգը, չորանոցում դատարկելիս, շարելու համար այնքան հարմար ե, թվում ե, վոր կիսով չափ արգեն շարված է:

Մուռմ ե, վոր հետազում առավելագույն չափով ոգտագործեն ծխախոտի տերենների ռացիոնալ քաղի և դասավորման

բոլոր առավելությունները, այն եւ ըստ հնարավորին արագ թելեր:

Իսկապես՝ ընկ. Բոստանջյանը թելում եւ շատ արագ:

Ք Ա. Ղ. Ը

Ընկ. Բոստանջյանը քաղում եւ յերեկոյան (քաղի ամենալավ ժամանակ), իսկ առավոտից մինչև յերեկո (մինչև հաջորդ քաղի սկիզբը) ամբողջ ժամանակ թելում եւ, նույն յերեկոյան դարձյալ քաղում եւ, և այսպես շարունակ:

Ընկ. Բոստանջյանի կարեռագույն ուսցիոնալացման ձեզ քաղի յեղանակն եւ: Նա քաղում եւ յերկու ձեռքով՝ միաժամանակ յերկու շարքից, հավաքելով ամեն մի ձեռքի մեջ այնքան, վորքան զոր կտեղավորմի, սակայն շատ չբեռնելով ձեռքերը՝ մոտավորապես մեկ ձեռքովմ 8—15 հատ «ծրապիզոն» տեսակի մեջին չափից, իսկ խոզոր տերեններից՝ 8—12 տերև «Սամսոն» տեսակից, նայած քաղին և տերենների մեծությանը՝ ավելին (3—5 տերև):

Քաղվող տերեկի կոթունը վերցվում եւ ցուցամատի և միջամատի արանքը, իսկ բութ մատով վերեկից թեթև շրջապտույտով դեպի առաջ և միաժամանակ սեղմելով ներքև՝ կատարվում եւ տերեկի քաղը:

Քաղված տերեկի կոթունն ամուր բռնելով հիշված ձեռքի մատների մեջ՝ Բոստանջյանը տերեկը յերեսի կողմով իջեցնում եւ նույն ցողունի վրա դտնված հասունացած տերեկի վրա՝ ուղիղ դնելով կոթունը կոթունի վրա, և այսպես կատարվում եւ տերենների հետագա քաղը, մինչև վոր յերկու ձեռքերն ել կլցվեն տերեններով: Քաղի ամբողջ ժամանակաբանթացքում՝ ցուցամատը և միջամատը քիչ կեռում եւ, յերրորդ՝ մեծ մատն ամբողջ ժամանակ մնում եւ ձգված և ամուր բռնում եւ տերենների կոթունները դեպի առաջին յերկու մատը, վորը հնարավորություն եւ տալիս պահպաննելու կոթուններն այն ուղղությամբ և կարգով: Վորպիսին դրված են դրանք քաղի մոմենտին: Քաղը կատարում եւ ցուցամատերի վերջին մասերում, իսկ ձեռքի մեջ քաղված տերենները կուտակվելուն պես, հետզհետե նրանց կոթուններն իջեցնում եւ դեպի մատների ներքնի մասերը և բռնում նույն կարգով (ուղիղ գծով տերեկի կոթունների դասավորությամբ), ինչպես վոր կատարված եւ քաղը:

ՔԱՂՎԱԾ ՏԵՐՎՆԵՐԻ ՓՆՁԵՐԸ
ԿՈՒՑՏԵՐՈՎ ԴԱՍՎՈՒԵԼԸ

Այդ ձեռվ քաղած տերենները հավասար փնջերով և կանոնավոր դարսված դնում եւ ձախ ձեռքի փնջի վրա՝ մի գծի ուղղությամբ, այդպիսով, կարծեք թե, շարունակելով ձախ ձեռքի տերենների կոթունների գիծը, փնջերի արանքը փոքր տարածությամբ, հաստությամբ մեկից յերկու կոթունի չափով:

Իհարկե՝ այդ պայմաններում պահպանվում եւ քաղի ժամանակ՝ յուրաքանչյուր փնջի կոթուններին դրված դասավորման ձեր:

Քաղված ծխախոտի տերենները կանոնավոր կերպով դարում են առանձին փնջերով՝ փոքր կույտերով, միջարքային տարածությունների հարմար տեղերում, այնպես, զոր կույտերը շուրջան չգանցան, չխախտեն փնջերի տերեվների ուսցիոնալ դասավորությունը:

Ավելի լավ եւ այդպիսի կույտեր դնել մի շարքի վրա մոտիկ գտնված յերկու ցողունի մեջտեղը, կույտերը շուրջալու համար:

Կույտերի մեծությունը և նրանց միջի տարածությունը սովորական են, ինչպես դա հարմար եւ աշխատողին: Սակայն կույտերը չեն դրվում շատ մեծ զուռ գալուց խույս տալու համար փորից կարող եւ խառնվել տերենների դասավորման կարգն առանձին փնջերում: Բայց և այնպես կույտերը չեն դրվում շատ փոքր՝ հավաքի միջոցին ավելորդ ժամանակ չկորցնելու համար:

ԻՉՆՊԵՍ ԴԱՐՍԵԼ ՔԱՂՎԱԾ ԾԽԱԽՈՏԸ
ԶԱՄԲԵՑՈՒՆԵՐԻ ՄԵԶ

Յեթե քաղը կատարվում եւ մեկ ուղղությամբ (սովորաբար ըստ թեքության՝ ներքեկից վերև) և տախտակի լայնության քաղվելիք շարքերի յերկարությունն այնպես եւ, վոր միաժամանակ շարքերից լրիվ ընդգրկվում են ծխախոտի տերենները, նույն շարքով հետ գառնալիս կանոնավոր կերպով հավաքվում են նրա մեջ դարսված տերենների կույտերը և դարսվում զամբյուղների մեջ, պտուտակածե՝ ձափից—վերև—աջ՝ կոթուններով դեպի զամբյուղի պատերը—մինչև զամբյուղի լցվելը: Հստ վորում պետք եւ ամբողջ ժամանակ հետեւել, վորպիսզի փնջերի մեջ տերենների դասավորության կարգը պահպանվի, իսկ խախտվելու դեպքում՝ ուղղել:

Յերկու ուղղությամբ քաղը կատարելիս, կամ տախտակի լայնությունը նեղ լինելու դեպքում (կարճ շարքեր), սկզբից կա-

բելի յի քաղել ծխախոտ մեկ զամբյուղի չափով, ապա հավաքել քաղցած կույտերը և նույն կարգով ել դրանք դարսել զամբյուղի մեջ՝ ամեն անդամ հավաքելով ձեռքերի և կրծքի արանքը տերևների լրիվ քանակ:

Մեր կողմից նկարագրած կանոնավոր քաղի և դասավորման ձեռն առաջին հայացքից կարող ե թվալ մանրակրկիտ և զատ ժամանակ պահանջող ձև, բայց դա ճիշտ չէ: Ինչպես փորձը ցույց տվեց, կանոնավոր քաղի և դասավորման վրա շատ ժամանակ չի ծախսվում, իսկ յեթի միքիչ ել ավել ծախսվի, այդ ժամանակ կտնտեսվի ծխախոտը թելելու ժամանակը:

ԶՈՐԱՆՈՑՈՒՄ ԾԽԱԽՈՏԻ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՔԱՏԱՐԿՈՒՄԸ ԶԱՄԲԵՐՈՒԴԻՒՑ

Տերևների դասարկումը զամբյուղներից կատարվում և հակառակ կարգով, այսինքն՝ աջից ներքև, ձախից՝ նույն փնջերով, ինչպիսիք դարսված են յելել, խստորեն պահպանելով փնջերում տերևների դասավորման այն կարգը, վորը տրված և քաղի ժամանակ: Այդ կարգի խախտման դեպքում պետք ե ուղղել դասարկելու ժամանակ:

Զամբյուղում դասավորված ծխախոտերը չօրանոցում դասավորում են թելելու համար, դրա համար ել ընտրում են հարամար տեղ ու դարսում խիտ շարքերով, կոթունները կոթունների դիմաց: Էստ վորում շարքերի լոյցնությունը կազմում է 1,3—2 մետր, իսկ յերկարությունը (շարքերի քանակը)՝ յենելով քաղված ծխախոտի քանակից: Ամեն մեկ այդպիսի շարքի հաստությունը հավասար է իրար վրա դրված՝ յերկու ձեռքով քաղած տերևների քանակին (յերկու փունջ):

Շարքերն ընկած են ձախից աջ, յուրաքանչյուր հաջորդ շարք խիտ կերպով գրվում և նախորդի վրա, կոթունը՝ կոթունի դիմաց, նույն ուղղությամբ, ինչպես առաջին շարքը:

Տերևների փնջերը դարսում են ձախ ձեռքի տակ (վորը տերևները տալիս ե ասեղին) այն կարգով, վորպիսպի առավելագույն չափով նպաստավոր լինի ձախ ձեռքով բռնելու ամբողջական փնջերը և հարմար լինի թելելու համար: Մյուս ձեռքով թելելու դեպում (ձախլիկ) տերևների փնջերի դասավորությունը, սկսած քաղից (դնելով ձախ ձեռքի փունջն աջ ձեռքի վրա), մինչև դասարկելը ներառյալ կատարվում է հակառիք կարգով:

ԹԵԼԵԿԸ

Ռացիոնալ ձեռվ տանելով նախապատրաստական աշխատանքները մինչև քաղը վոր ավելի լայն չափով նազատում և հեղտացնում ե այդ պրոցեսը, թելովն ամենահարմար ձեռվ տեղավորվում ե դատարկված և կարգով դասավորված ծխախոտների մոտ՝ թելելու համար:

Ահա այստեղ ե յերկան գալիս ուցիոնալ և վարպետորեն քաղված տերևների տառավելությունը և դրանց կանոնավոր դասավորումը՝ թելելու համար (ճիշտ փնջերով), վորը կենսագործում է ընկ. Բոստանջյանը: Մնում է առավելագույն չափով սպագործել այս բոլոր նախապատրաստությունը, այսինքն՝ նույն թելումը կատարել, վորքան հնարավոր ե, արագ թափով՝ դործածության մեջ դնելով ձեռքերի ամբողջ հմտությունը:

Ձեռքի մեկ բռնումով վերցնում են տերևների ամբողջ փունջը՝ 10—16 հատ (ինչպես վոր նրանք դարսված են քաղի ժամանակ), դնում են ձախ վատքի ծնկի վրա, այնուհետև ձախ ձեռքի մեջ են վերցնում 3—5 տերեւ միանգամբից, և մեկական տերեւ արագորեն շարում ասեղի վրա: Ասեղի վրա շարված տերևները կուտակվելուն պիս (մինչև 10—15 հատ), նրանք արագորեն իջեցնում են մինչև ասեղի կեսը: Այսպիսի թելելը շարունակվում է մինչև ասեղի առաջին մասի լրանալը: Դրանից հետո ասեղը բարձրացնում են վերև՝ ուղղահայց, վերջավորությունը հենում աջ վատքի վրա, և շարված տերևները՝ յերկու ձեռքերով պրագորեն անց են կացնում ասեղի յերկորդ մասի վրա՝ փոքր փնջերով: Այնուհետև շարված տերևներն արագորեն՝ մի մետր տարածության վրա ասեղի վրայից իջեցնում են թելի վրա, և իսկույն սկսում նորից նույն ձեռվ շարել ասեղի վրա: Ցերկորդ ասեղի լցվելուց հետո, վորն իջեցնում են թելի վրա, բայց գեռևս չեն հավասարեցրած ասեղից իջեցրած տերևները, թելի հետ միասին վերցնում են աջ կոնատակը, թույլ սեղմում են մարմնին, իսկ ձախ ձեռքով արագորեն ձգում են նրանց միջից թելը և այդպիսով տերևները տարգում են թելի վերջը՝ 30 սանտիմետր տարածության վրա: Այնուհետև տերևներն առանձին փնջերով իջեցնում են մինչև վերջը, ըստ վրում ձեռքի ափի թեթև հարցածով տերևների կոթունները հրում են վեր՝ թելի վերջից՝ հակառակ ուղղությամբ, դրանք հավասարվում են թելի

վրա անհրաժեշտ խոռոչյամբ՝ յելնելով ծխախոտի տեսակից և քաղցից։ Այսուհետև իջեցնում են թելի վրա յերկրորդ ասեղի վրայի տերեները, ու պրոցեսը շարունակվում են ամորդ ձևով։

Թելելու ժամանակ յեթե պատահում են այնպիսի փնջեր, վորոնց տերեների կոթունների դասավորության ուղղութունն այն ձեռքի տակ չի ընկնում, վորով կատարվում են թելումը, ժամաների թեթև պոտույտով կոթունները վերաբասավորվում են հարամար ուղղությամբ։

ՀԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՐՍՈՒՄԸ ԹԵԼԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Թելելու ժամանակ շարանները լցվելուն պես այդպիսիք դարսվում են ձախից աջ, մինչև շարանների առաջին կեսը, իսկ յերկրորդ մասը՝ հատկանի ուղղությամբ, առաջինի կողքին մոտիկ։ Այս գեղագում թելողը տեղից չի շարժվում և ժամանակ չի կորցնում հատկապես շարված թելերի հավասարեցման և առանձին դասավորման պրոցեսների վրա։

Շարանները թելած վայրից կարելի յե ուղղակի տալ վարդոնների կամ շրջանակների վրա կախելու համար, այդպիսով խուսափելով շարանների տեղափոխման համար ժամանակ կորցնելուց և ծխախոտի ունիանի կական փշացումից։

Ամբողջ աշխատանքն ընթանում ե արագ, մաքուր և կանոնավոր, առանց ծխծխոտի փշացման և կորստի։

ԸՆԿ. ԲՈՒՏԱՆԶՅԱՆԻ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԹԵԼՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծխախոտի քաղելու և թելելու պրոցեսների ստուգման և ռացիոնալացման ձևերը տարածելու նպատակով, «Խորհրդային Արխազիա»-յի խմբագրության, Արտաքարկի և Արխազիայի Ծխախոտագործական զոնալ կայանի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը ընկ։ Բոստանջյանի հետ միասին ցուցադրական աշխատանքի ատարեց Սուխումի շրջանի «Խորհրդային Արխազիա» կոլտնտեսությունում։ Այդ աշխատանքների արդյունքերը ցույց տվեցին ընկ։ Բոստանջյանի պրիմաների լիովին ունալ լիվ արդյունակություն ընկ։

Կոլտնտեսության ակտիվի ներկայությամբ, վերոհիշյալ աշխատանքների ձևերի նկատմամբ դրվեց խրոնոմետրաժային դի-

տողություն։ Դիտողության արդյունքներից պարզվեց, վոր չնայելով ինամքով կատարած քաղի աշխատանքներին, քաղված տերենների կանոնավոր դասավորմանը՝ փնջերի և զամբյուղների մեջ, ընկ։ Բոստանջյանի քաղը համեմատած կոլտնտեսության մյուս հարգվածայինների հետ, մեծ ժամանակ չխլեց։

Ընկ. Բոստանջյանի ցուցադրական քաղի խրոնոմետրաժային արդյունքները հետևյալ պատկերը տվեցին։ — 44 րոպեյի ընթացքում Բոստանջյանը թելոց 4 շարան (յուրաքանչյուրը 11 րոպե) կամ մեկ ժամում կտա 5,5 շարան, իսկ 12 ժամում՝ մոտավորապես 65 շարան։

Յեթե նկատի ունենանք աշխատանքի պայմանների վորոշաբարությունները, վորոնց մեջ կատարվում եյին բոլոր կոլտնտեսականների, զյուղատնտեսների և թղթակիցների կողմից աշխատանքի դիտումը և այն, վոր ընկ։ Բոստանջյանը թելումը ցույց է տալիս «Տրապիզոն» տեսակի ծխախոտերի վրա, վորոնց հետ մինչ այդ գործ չեր ունեցել և վորոնց թելումն իրեն խոչըրության պատճառով այնքան ել հարմար չեր — այդ պայմաններում անգամ ընկ։ Բոստանջյանի աշխատանքի ձևերը ցույց տվեցին իրենց բոլոր առավելությունները։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոհիշյալից պարզ է, վոր ընկ։ Բոստանջյանի աշխատանքի ձևերը պարզ են յեվ մատչելի բոլոր ծխախոտագործերին, վորոնցից շատերը մասնակի կերպով արդեն կիրառում են այն։

Ցանկության դեպքում, ուշադրության և դեպի աշխատանքը կանոնավոր վերաբերմունք ունենալու դեպքում ամեն մի ծխախոտագործ հեշտությամբ կարող և կիրառել ընկ։ Բոստանջյանի ձևերը, վորոնք հնարավորություն են տալիս բարձրացնելու ծխախոտի քաղի և թելելու աշխատանքի արտադրողականությունը 50—100 տոկոսով։

Ցանկության աշխատանքի պարակտիկայում արդեն այդ ցույց են տալիս։

Արտաբակի գյուղատնեսես-ծխախոտագործ՝ Ս. Մուրտիդի Արխազիայի ծխախոտագործական զննալ կայանի գյուղատնես-ծեսեսագեց՝ Մ. Ալեքսեյիկ

**ԽՍՀ ԸԲԽԱԶԻԱՅԻ ՃԽԱԽՈՏԱԿՈՐԺԱԿԱՆ
ՃՐՋԱՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒՅՆԵՐԻՆ**

Մենք՝ Սուխումի շրջանի, Միխայլովկա գյուղի «Խորհըր-
դային Արխաղիա» կոլտնտեսության անդամներս գործնականում
համոզվեցինք ծխախոտի քաղի և թելելու ձեերի առաջելու-
թյուններում, վորպիսիք մեզ ցույց տվեց անձամբ ընկ. Բոս-
տանյանը հոկտեմբերի 3-ին:

Ինչով բացատրել ընկ. Բոստանյանի նվաճումները: Դրանք
բացատրվում են նախ և առաջ քաղի ճիշտ սիստեմով, վորն ա-
րտգացնում ե հետագայում ծխախոտի թելումը. յերկրորդ՝ ծխա-
խոտի ճիշտ դասավորումը զամբյուղների մեջ և կանոնավոր դա-
տարկելը և, վերջապես, թելելու ընթացքում այդ պրոցեսն արա-
գացնող մի շարք ձևերի կիրառումը: Հոկտեմբերի 3-ին, մեր կոլ-
տնտեսությունում փորձնական թելելու ժամանակ ընկ. Բոստան-
յանն աշխատելով «Տրապիզոն» ծխախոտների վրա, վորոնց շա-
րելն ավելի դժվար է, քան «Սամսոն» տեսակը, 44 բոպեյի ըն-
թացքում շարեց 4 շարան, այսինքն՝ 75 թել շարելու համար
Բոստանյանին կարիք կղզացվի ընդամենը 13 ժամ 45 բոպե,
վորը մենք համարում ենք խոշորագույն նվաճում:

Մենք հանձն ենք առնում տիրապետել ընկ. Բոստանյանի
մեթոդին և այդպիսին դարձնել մեր կոլտնտեսության անդամների
սեփականությունը: Յեթե առաջներում մեր կոլտնտեսության
լավագույն հարվածայիններն որական տալիս եյին 25—30 շարան,
ընկ. Բոստանյանի մեթոդի տիրապետման դեպքում, սոցմըցման
միջոցով, մենք հուսով ենք ծխախոտի թելումի նորման զգալի-
որեն բարձրացնել: Մեր նպատակն է հասնել ընկ. Բոստանյա-
նին:

Մենք գտնում ենք, վոր Բոստանյանի փորձը, վորը տալիս
և սեկորդային արտազրանք՝ որական 70—75 ստանդարտային
շարան, պետք է նույնպես դառնա Արխաղիայի բոլոր կոլտնտե-

սական ծխախոտագործների սեփականությունը, վորը կոժանդակի
պայքարելու՝ ծխախոտի թերքահավաքի սլանի ժամանակին կա-
տարմանը:

Կոչ ենք անում բոլոր կոլտնտեսականներին՝ հետեւելու մեր
որինակին և անցնելու Բոստանյանականների շարքերը:
«Խորհրդային Արխաղիա» կոլտնտեսության անդամների
անունից (25 ստորագրություն):

ԲՈԼՈՐ ԿՈԼՏՆՏԵՍՄԱԿԱՆՆԵՐԸ ԿԵՐՈՂ ԵՆ ՑԵՎ ՊԵՏՔ Ե ԸՆԴԽԱՏԵՆ ԲՈՍԱՆՁՅԱՆԻ ՊԵՏ

Աշխուժ հետաքրքրություն առաջացրեց «Պոբեդա» կոլտընտեսության անդամների մեջ (Մերիեւուի, գյուղլուրիուրդ) ընկ. Բոստանջյանի գալուստն իրենց գյուղը՝ Նրա սիստեմով ծխախոտի քաղի և թելումի ցուցադրմանը հավաքվեցին համարյա թերոլոր կոլտնտեսականները:

Ընկ. Բոստանջյանի մատների արագ և վատահ շարժումները սելեռել ելին յերիտասարդության և ծերերի ուշադրությունը նրա վրա: Դիտելով նրա աշխատանքը՝ յուրաքանչյուրն իրեն մեջ յեղրակացություն և անում՝ ինչպես ել վոր լինի, պետք և տիրապետել ընկ. Բոստանջյանի մեթոդին:

Ահա, որինակի համար, ինչ հայտարարեցին կոլտնտեսության լավագույն հարվածայիններ՝ ընկ. ընկ. Կորստենկոն, Իշմերինկոն, վորոնք շարում ելին որական 35 շարան.

— Առաջ մեզ մոտ լավ թելողներ համարվում ելին նրանք, վորոնք կատարում ելին նորման՝ 15—18 շարան: Որական 25 շարան թելողը հաջվագում եր հուժ գովելի. 35—40 շարանը մեզ համար հանդիսանում եր արտադրողականության սահմանը: Իսկ այժմ մենք անհատապես համոզվեցինք, վոր հնարավոր և հաջողությամբ որական թելել 40 և 50 շարան: Անհրաժեշտ և միայն ուշադրությամբ ուսումնասիրել ընկ. Բոստանջյանի քաղի և թելումի սիստեմը:

— Պարտավորվում ենք հաջորդ տարվա ծխախոտի բերքահավաքի սեղոնի սկզբին թելել վոչ պակաս 45—50 շարան:

— Ընկ. Բոստանջյանի սիստեմի մեջ չկա վոչ մի գաղտնիք, — հայտարարեց ծեր կոլտնտեսական ընկ. Սմետանան, — կա միայն խելացի և բարեխիղճ աշխատանք: Այդ պատճառով աշխատել այնպես, ինչպես աշխատել և ընկ. Բոստանջյանը, կարող են և պարտավոր են անել մեր բոլոր կոլտնտեսականները: Այս աարի բերքահավաքը մենք վատ չկատարեցինք, սակայն պետք է հաշվի

առնել, թե մենք իզուր տեղը վորքան աշխատանք վատնեցինք. տերեները քաղում ելինք ինչպես պատահում եր, զամբյուղների մեջ դասավորում ելինք անհորհք կերպով, չորանոցում վոխանակ կանոնավոր դասավորելու, տերեները թափահարում ելինք ինչպես դարման: Յեզ ահա արդյունքն այն յեղավ, վոր մեր լավագույն թելողներն որական շարում ելին վոչ ավելի 35 շարանից, մինչդեռ ընկ. Բոստանջյանը թելում և յերկու անգամ ավելի: Յես խորապես համոզված եմ, վոր ցանկության դեպքում՝ հնարավոր և արագ և ճշգությամբ տիրապետել Բոստանջյանի փորձին և աշխատել յերկուշյերեք անգամ բարձր արտադրողականությամբ:

Եարճ տեղող միախնդում, վորը կազմակերպված եր «Խորհըգային Արխագիա» և «Արտաքակի» խմբագրությունների բըիգադների կողմից, մասնակցող ծխախոտագործները վորոշեցին բոլոր կոլտնտեսականներին ներգրավել Բոստանջյանական արագին՝ ծխախոտի թելումի նորմաների բարձրացման համար և սոցմըրցման հրավիրեցին (Եմբրոսսո-սոցիալիզմոս) հարեան կոլտնտեսությանը:

Վ. Յուժին

ԲՈՍՏԱՆՋՅԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՐՔԵՐԸ ԽՏԱՆՈՒՄ ԵՆ

Հոկտեմբերի 6-ին ընկ. Բոստանջյանն այցելեց Յեկատերինյան գյուղխորհրդի «Եմբրոսս սոցիալիզմոս» կոլտնտեսությունը:

Ծխախոտի տնկարանների չքաղված հողամասի վրա հավաքված կոլտնտեսականներին նա ցուցադրեց ծխախոտի քաղի վերաբերյալ իր սիստեմը: Ցուցադրական քաղի վերջում կոլտընտեսության լավագույն թելողներ՝ ընկ. ընկ. Կուսիդին, Պոպանդոպուլոն և ուրիշներն արգեն լիակատար տիրապետել եյին Բոստանջյանի քաղի սիստեմին և տերենների դասավորման ձևին:

Ծխախոտի մոտակա չորանոցում տեղի ունեցավ Բոստանջյանի ծխախոտի թելումի ցուցադրումը: 11 բոպեյի ընթացքում ընկ. Բոստանջյանը թելեց մեկ շարան «Տրապիզոն» տեսակի խոշոր տերեավոր ծխախոտ: Վեց բոպեյից հետո վերջացրեց նույն քանակի ծխախոտի տերենների թելումը կոլտնտեսության լավագույն թելող ընկ. Պոպանդոպուլոն:

Կոլտնտեսականներն ամենուրեք համոզվեցին ընկ. Բոստանջյանի ծխախոտի քաղի, տերենների դասավորման և թելումի ուսցիոնալ ձևի առավելությունների մեջ:

Կոլտնտեսականներ՝ Պոպանդոպուլոն, Կուսիդին, բրիգադավար Շիշմանիդին և ուրիշներն իրենց հայտարարեցին հարվածայիններ՝ Բոստանջյանի մեթոդին տիրապետելու համար:

ԻՄ ՆՊԱՏԱԿՆ Ե՝ ՀՅՈՒՆԵԼ ԸՆԿ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻՆ

(Կոմյերիտական կոլտնտեսականի նամակը)

Յես իմացա, վոր Ալախաձեյի մարտի 4-ի անվան կոլտընտեսության անդամ ընկ. Բոստանջյան Գարեգինն որական թելում և 75 շարան ծխախոտ: Դա ինձ շատ հետաքրքրեց: 10 տարի յես աշխատում եմ ծխախոտագործության մեջ, մինչև անգամ ծերերից վոչ մի որ չեմ լսել ծխախոտի թելումի այլքան բարձր թիվ: Յես վորոշեցի Բոստանջյանի փորձը յուրացնել և անմիջապես ուղեկորչեցի նրա մոտ:

Ուստիմասսիրելով նրա փորձը՝ յես համոզվեցի, վոր իբրև հասրավոր ե որական 75 շարան թելել:

Աշխատելով ընկ. Բոստանջյանի սիստեմով՝ առաջին որը յես շարեցի 50 շարան, յերկրորդ որը՝ 58; իսկ այժմ թելում եմ արդեն որական 61 շարան: Առաջ յես թելում եյի միայն 25–30 շարան: Իմ նպատակն ե՝ հասնել Բոստանջյանին, դրան յես կհասնեմ անպայմանորեն:

Զեռք բերելով այդպիսի հաջողություններ՝ յես ծավալեցի իմ խմբակում սոցմբացալցությունը, և առողջ խմբակը դուրս յեկավ Բոստանջյանական արշավի: Այժմ արդեն առաջ են գալիս նոր Բոստանջյաններ: Այսպես, որինակ՝ կոմյերիտականներ Վարելյան Սերոբը և Զամյան Հարութը կատարելով ծխախոտ կախելու և վագոնները քշելու նորմանները՝ ժամանակ են ունենում նաև շարելու որական 25 շարան ծխախոտ:

Մտնելով Բոստանջյանական շարժման մեջ՝ յես, իբրև կոմյերիտական, կոչ եմ անում Աբխազիայի ծխախոտի տնկարանների բոլոր կոմյերիտականներին՝ կազմակերպել բռուտանջյանական արշավ այնպես, ինչպես իզոտովյան շարժումը Դոնբասում:


Եկանգիան Մետրո

Որջոնիկիձեյի անվան կոլտնտեսություն,
Գարեգի շրջան, Ալախաձե վյուղխորհուրդ:

ԲՈՍԱՆՁՅԱՆԱԿԱՆ ԸՆԴԾԸՆՔԸ ԲԱՐՁՐԱՅՐԵՑ ԸՆԴԾԸՆՔԻ ԱՐՏԵՂՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի սկզբներին լավագույն շարող Գարեգին Բոստանջյանն իր աշխատանքը ցուցադրեց «Խորհրդային Արխազիա» կողոնտեսությունում (Միխայլովկա գյուղ):

Խորհրդային Արխազիայի կոլտնտեսականները վորոշեցին տիրապետել Բոստանջյանի մեթոդին՝ ծխախոտի քաղի և թելումի:



Հնկ. Բոստանջյանը քելումի իր փորձը ցույց է տալիս «Խմբոսան սոցիալիզմու» կոլտնտեսության քելողներին. Պողամդոպուլոյին:

Գործում: Յեկ հենց աշխատանքի առաջին որերին ստացվեցին վորոշակի արդյունքներ. այսպես՝ Ագաֆի Պոպանդոպուլոն, վորապետ շարան 23 շարան, սկսեց շարել 29 շարան. Ալեքսանդրա Ֆրանգոպուլոն, վոր շարում եր 17 շարան, այժմ

տալիս ե 23։ Մատվեյ Գրուզուլիդին 20 շարանի փոխարեն շարում ե 25, Զոյա Կեշանիդին շարում ե 30 շարան. առաջ շարում եր միայն 15։

Այսպիսով, մեր կոլտնտես կանոները սեփական փորձով համոզվեցին, վոր Բոստանջյանի նման աշխատելով՝ զգայուրեն բարձրացնում են թերելու աշխատանքի արտադրողականությունը։ Առաջիկա տարում «Խորհրդային Արխազիա» կոլտնտեսությունն ելավելի ռեժիսուր կկազմի Բոստանջյանի մեթոդի կիրառմանը։

Իլիադի

ՊՐԱՎԴԱ

Համամիւրենական կոմունիստիկան
(բոլուսիկների) կուսակցության
Կենտրոնի յեզ Մոսկվայի կոմիտեյի ուժան

№ 2068 | 28 ապրիլ 1934 թ., առքար

ԾԽԱԽՈՏԻ 75 ԹԵՂ ՄԵԿ ՈՐՈՒՄ

Սուխում 27/4 («Պրավդա»-յի թորակցից) Նիստի շարելը քրտածան աշխատանք ե: Նա պահանջում է մեծ խնակարգյամբ բանվորական ձեռք յեվ խոր և շատ ժամանակ: Առվարական նորման եռական 18 ստանդարտ 5 մետրանոց թել:

Արխօգիսի ծխախոտագործական լավագույն հարգավայրեն որական շարում են մինչեւ 40 թել: Ռեկորդային թվի յե հասցրել Գագրիի շրջանի Ալախան զյուղի մարտի 4-ի ամփան կորստնեա. ամփան Բռուտաճ-ջանուր նա որական շարում ե 70-75 թել: Բռուտաճյանի աշակերտերը, վրանք աշխատում են նրա մերողով, արդեն շարում են 50-60 թել:

Բռուտաճյանի մերոդը ծովովդականացնելու յեվ նրա փորձը ուրիշ ծխախոտագործերին հաղորդակից դարձնելու համար, Սուխումի «Սպավառակայա Արխօգիս» թիրքի խմբագրությունը «Արտաքակ» հետ միասին կազմակերպում ե ընկե. Բռուտաճյանի շրջագայությունը դեպի Արխօգիսի բարը կոլտնտեսությունները:

ԺԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻԶՈՏՈՎ՝ ԴԱԲԵԳԻՆ ԲՈՍՏԱՆՔՑԱՆ ՊԱՐԴԵՎԱՏՐՎԵՑ

Սեպտեմբերի 26-ին «Պրավդա»-յում հրատարակված նյութի հիման վրա, կոլտնտեսական Բռուտաճյանին պարզեվատրում եմ մեկ ժամացույցով: Ուղարկեցիք ավիտովուով թելումի միթողի նկարագրությունը: Բուքութիք վերցրեցիք յետ ընկնող Դրիմը: Փռստով ուղարկեցիք ժամացույց՝ ծխախոտագործական լավագույն կոլտնտեսականներին բրիգադավարներին պարզմատրելու համար:

ԽՍՀՄ Հոգժակամատի Գլխաքակ, Գլ. ԱՏԵՐՄԱՆ

ԲՆԿ. ԲՈՍՏԱՆՔՑԱՆ Պ. Կ. (ր) Կ. ԱԲԽԱԶԻԵՑԻ
ՄԱՐԶԿՈՄԻ ԳԱՐՏՈՒՂԱՄ
ԲՆԿ. ՎԼ. ԼԱԴՈՐԻԵՑԻ ՄՈՏ

Սեպտեմբերի 9-ին Վ. Կ. (ր) Կ. ԱԲԽԱԶԻԵՑԻ ՄԱՐԶԿՈՄԻ քարտուղար ընկե. Վլ. Լադորիան ընդունեց ծխախոտագործության իզոտով—ծխախոտի թելումի վարպետ Գարեգին Բոստանջյանին և նրա հետ գրույց ունեցավ:

Նույն որն ընկե. Բոստանջյանին ընդունեց Արտաքակի դիբեկոոր ընկե. Լակորան:

Արտաքակն ընկե. Բոստանջյանին պարզեատրեց 300 առւբլով: Բոստանջյանի մեթոդն ակնառու կերպով ցուցադրելու համար՝ Ծխախոտագործական զոնալ կայանը հրատարակելու յե հատուկ պլակատ:

«Խորհրդային Արխօգիս» թերթի խմբագրությունը Մուղագիայի և Ազով-Սև-ծովյան յերկրային հողային վարչությունից նամակ ե ստացել վորով նրանք խնդրում են ուղարկելու իրենց՝ Բոստանջյանի աշխատանքի մեթոդի մանրամասն նկարագրությունը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Գարեգին Բոստանջյանի կենսագրությունը	9
Ծխախոտագործության անվանի մարդը	11
Բոստանջյանը թիւղում ե	14
Ինչպես ե աշխատում Գարեգին Բոստանջյանը	20
ԽՍՀ Աքիմագիայի ծխախոտագործական բոլոր կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին	28
Բոլոր կոլտնտեսականները կարող են և պետք ե աշխատեն Բոստանջյանի պես	30
Բոստանջյանականների շարքերը խտանում են	32
Բոստանջյանական աշխատանքը բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը	33
Իմ նպատակն ե՝ հասնել ընկ. Բոստանջյանին	34
Ծխախոտագործության իզոտով՝ Գարեգին Բոստանջյանը պարգևատրվեց	36
Բոստանջյանը ՎԿ(բ) և Աքիմագիայի մալզկութի քարտուզարը ընկ. ՎԼ. Լադարիայի մոտ	37

Պատ. խմբագիր՝ Ս. Գ., աելու խմբ. Հ. Մուրադյան, լուս. խմբ. Արք. Գրիգորյան
Թարգմ. Ա. Գրիգորյան, սրբազնից՝ Գար. Հակոբյան
Գլամելիտի լիազոր Ս. — 443, հրատ. № 266, պատվիր. № 558, տիքաժ 1000
Հանձնվել և արտադրության 1935 թ. սեպտեմբերի 14-ին
Ստորագրվել և տպելու 1935 թ. սեպտեմբերի 27-ին
Պյուղներատի տպարան, Ելքեան, Նալբանդյան 21



18246

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.



ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵԼԽԶԳԻՅ - ԵՐԻՎԱՆ 1935 •